ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/36

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1189-2021 գրությամբ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.01.2021թ. թիվ ՊՆ//306-2021 գրության հիման վրա 01.02.2021թ. թիվ 26/26/1189-2021 գրությամբ նախաձեռնել է «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Միևնույն ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանին ուղղված 08.02.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), հայտ է ներկայացրել «Բրենդս քոննեկտ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի մասով նշված է (նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 2700 mah), այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում է (նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 3000 mah): Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 20.01.2021թ. մերժել է «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով:

Վերը նշված չափաբաժնի մասով Ընկերությունը ներկայացրել է 1916666.67 ՀՀ դրամի գնառաջարկ, սակայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/3» թիվ 4 արձանագրությունից երևում է, որ նվազագույն գնառաջարկը եղել է 1 900 000 ՀՀ դրամ, որտեղից պարզ է դառնում, որ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ն իր հնարավոր մատակարարվող ապրանքը գնանշել է շուկայական գնի շրջանակներում և նպատակ չի ունեցել մրցույթը հաղթել առաջարկելով ավելի ցածր գին՝ ավելի ցածր տեխնիկական պահանջով:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ նշված ապրանքատեսականու մասով ընկերությունը կատարել է թե տեղական, թե միջազգային շուկաներում հետազոտություններ, որտեղից պարզվել է, որ նշված ապրանքը չունի 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրեր, այսինքն՝ AA լիցքավորվող մարտկոցը չի լինում 3000 mah:

Ուստի, քանի որ «Բրենդս քոննեկտ» ՍՊ ընկերությունը որևէ միտում չի ունեցել խախտելու Գնումների գործընթացը, խնդրում ենք հանել «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացից»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/36 ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.01.2021թ. թիվ ՊՆ//306-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Բրենդս Քոննեկտ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի մասով նշված է /նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 2700 mah/ , այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում է /նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 3000mah/: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 18.01.2021թ ծանուցել էր «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ-ին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել վերը նշված անհամապատասխանությունը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 20.01.2021թ. մերժել է «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/36 ընթացակարգի շրջանակներում 11.02.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, 5-րդ չափաբաժնի մասով սահմանվել է հետևյալը.

Գնման առարկայի		
չ/հ	անվանումը	Տեխնիկական բնութագիրը
5	Մարտկոց AA տեսակի (Մարտկոց լիցքավորվող AA տեսակի)	Մարտկոց կուտակիչ (լիցքավորվող), AA տեսակի, բաղադրությունը՝ NiMH, նոմինալ վոլտաժ՝ 1.2Վ, նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 3000mah /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, լիցքավորման պահպանում՝≥1820(70%) /պահպանումը՝ 5-7օր 45^{0}C 0,2C ստանդարտ լիցքաթափման դեպքում/, հարաբերական խոնավությունը՝ 56±20% /ստանդանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, ոչ ուշ 2020թ. արտադրության:

3. Ընկերության կողմից Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացվել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը (1-ին չափաբաժնի մասով)	Ապրանքային նշանը (1-ին չափաբաժնի մասով)	Մակնիշը (1-ին չափաբաժնի մասով)	Արտադրողի անվանումը (1-ին չափաբաժնի մասով)	Տեխնիկական բնութագրերը
5	USAՌԿԵ	STARKE		YUYAO JOHNSON ELETEK CO, LTD Արտադրված է Բրենդս Քոննեկտ ՍՊԸ լիցենզիայով	Մարտկոց կուտակիչ (լիցքավորվող), AA տեսակի, բաղադրությունը՝ NIMH, նոմինալ վոլտաժ՝ 1.2Վ, նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 2700mah /ստանդարտ լիցքավորում/, լիցքաթափում, լիցքավորման պահպանում՝ ≥1820(70%) /պահպանումը՝ 5-7 օր 45°C 0,2 C ստանդարտ լիցքաթափման դեպքում/, հարաբերական խոնավությունը՝ 56±20% /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, ոչ շուտ 2020թ. Արտադրության:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի մասով նշված է /նոմինալ ունակություն՝ ոչ պակաս

2700 mah/, այնինչ՝ ընթացակարգի հրավերով պահանջվում է /նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 3000 mah/:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 18.01.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.01.2021թ. որոշում է կայացրել «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1189-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//306-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, 5-րդ չափաբաժնի մասով սահմանվել է հետևյալը.

Գնման առարկայի		
չ/հ	անվանումը	Տեխնիկական բնութագիրը
5	Մարտկոց AA տեսակի (Մարտկոց լիցքավորվող AA տեսակի)	Մարտկոց կուտակիչ (լիցքավորվող), AA տեսակի, բաղադրությունը՝ NiMH, նոմինալ վոլտաժ՝ 1.2Վ, ***նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 3000mah*** /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, լիցքավորման պահպանում՝≥1820(70%) /պահպանումը՝ 5-7օր 45^{0}C. 0,2C ստանդարտ լիցքաթափման դեպքում/, հարաբերական խոնավությունը՝ 56±20% /ստանդանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, ոչ ուշ 2020թ. արտադրության:

Ընկերության կողմից Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացվել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը (1-ին չափաբաժնի մասով)	Ապրանքային նշանը (1-ին չափաբաժնի մասով)	Մակնիշը (1-ին չափաբաժնի մասով)	Արտադրողի անվանումը (1-ին չափաբաժնի մասով)	Տեխնիկական բնութագրերը
5	ՍՏԱՐԿԵ	STARKE		YUYAO JOHNSON ELETEK CO, LTD Արտադրված է Բրենդս Քոննեկտ ՍՊԸ լիցենզիայով	Մարտկոց կուտակիչ (լիցքավորվող), AA տեսակի, բաղադրությունը՝ NIMH, նոմինալ վոլտաժ՝ 1.2Վ, ***նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 2700mah*** /ստանդարտ լիցքավորում/, լիցքաթափում, լիցքավորման պահպանում՝ ≥1820(70%) /պահպանումը՝ 5-7 օր 45°C 0,2 C ստանդարտ լիցքաթափման դեպքում/, հարաբերական խոնավությունը՝ 56±20% /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, ոչ շուտ 2020թ. Արտադրության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի մասով նշված է /նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 2700 mah/, այնինչ՝ ընթացակարգի հրավերով պահանջվում է /նոմինալ ունակություն՝ ոչ պակաս 3000 mah/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 18.01.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.01.2021թ. որոշում է կայացրել «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում դրանք չի շտկել, այսինքն՝ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ի այն դիտարկմանը, որ նշված ապրանքատեսականու մասով Ընկերությունը կատարել է թե տեղական, թե միջազգային

շուկաներում հետազոտություններ, որտեղից պարզվել է, որ նշված ապրանքը չունի 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրեր, այսինքն՝ AA լիցքավորվող մարտկոցը չի լինում 3000 mah, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպիսով՝ Ընկերությունը զրկված չի եղել օրենքով իրեն վերապահված իրավունքը սահմանված ժամկետում իրացնելու հնարավորությունից, այն է՝ բողոքարկելու գնման առարկայի բնութագիրը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ՝ Ընկերության կողմից ոչ միայն բողոք չի ներկայացվել, այլ ներկայացվել է մասնակցության հայտ, իսկ հայտերը գնահատվում են հրավերի պահանջներին համապատասխան, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերության այս դիտարկումը ժամանակավրեպ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1189-2021 գրությամբ «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Բրենդս քոննեկտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**